Հասցե. ՀՀ, ք. Երևան, Խորենացի 27ա/1 Հեռ. (+374 10) 541272, 560852 E-mail: hakzor@netsys.am

# ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի
մասնակիցներին

25 մարտ 2011թ.

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի՝ հետագայում Ընկերություն, կից հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի և սեփական կապիտալի մասին տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը՝ համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքի, հաշվապահական հաշվառման ստանդարտների, «ՀՀ Արժեթղթերի Շուկայի Մասին» օրենքին և համապատասխանում են ներդրումային ընկերությունների համար Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվներին և այլ իրավական ակտերին:

Ընկերության ներքին աուդիտի գործունեությունը և ներքին հսկողության համակարգը համապատասխանում են «ՀՀ Արժեթղթերի Շուկայի Մասին» օրենքի և Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, Կենտրոնական Բանկին ներկայացվող հաշվետվությունները ամբողջական են և արժանահավատ:

*Աուդիտոր՝* *Գառնիկ Ալեքսանյան*

*Տնօրեն՝* *Տիգրան Զորյան*

«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
"LONDON BUSINESS GROUP" LIMITED LIABILITY COMPANY
01223655
ՀՀ ԵՐԵՎԱՆ • RA YEREVAN

Address: 27a Khorenatsi, 1, Yerevan, Armenia Tel.: (+37410) 541272, 560852 E-mail: hakzor@netsys.am